ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ԴԻ-ՎԻ-ՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՋԱԿՑՎՈՂ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը դիմում է ոչ ֆորմալ, լրացուցիչ կրթության բնագառում գործունեություն ծավալող և/կամ մասնագիտացված կազմակերպություններին և/կամ անհատ փորձագետներից կազմված խմբերին[1] մասնակցելու **դասընթացների մշակման և ներդրման մրցույթին,** եթե կազմակերպությունը ծառայությունը մասնագիտացած է հետևյալ 2 հիմնական ուղղություններից որևէ մեկում.

- **Content writing, copy writing** (տեքստերի ստեղծում տարբեր մարքեթինգային հարթակների համար, «վաճառող» տեքստեր կայքերի, սոցիալական էջերի համար, այլ),
- **Թափոնների վերամշակում և վերօգտագործում** (թղթի, ստվարաթղթի, պլաստիկի, հագուստի և/կամ այլ, ինչպես նաև այդ հիմնահարցերի բնապահպանական ասպեկտների ներկայացում)

Կազմակերպությունը/ փորձագետների խումբը պետք է ունենա տվյալ ուղղությամբ ուսումնական ծրագրերի մշակման, իրականացման և կառավարման, ուսումնական գործընթացների գնահատման, մշատադիտարկման առնվազն 3-5 տարվա փորձառություն *(Մեծահասակների կրթության ոլորտում աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն):*

Նպատակը

Ծրագրի նպատակն է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից աջակցվող 4 մեծահասակների կրթության կենտրոնների (այսուհետ՝ ՄԿԿ) համար մշակել նշյալ ուղղություններից որևէ մեկով ուսումնական ծրագիր, վերապատրաստել մասնագետներին և աջակցել պիլոտային ուսումնական ծրագիրը կենտորնում իրականացնելու գործընթացին:

Ծրագրի իրականացման փուլերը

Ընտրված կազմակերպության հետ համագործակցությունն ընթանալու է հետևյալ փուլերով.

Փուլ 1: Կազմակերպությունը/ փորձագետների խումբը Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակին ներկայացնում է մրցույթի մասնակցության հայտ՝ լրացնելով https://shorturl.at/beAX3 հղումով տեղադրված հայտաթերթիկը և մինչև հունիսի 25-ը ներառյալ ուղարկելով info@dvv-international.am և gevorgyan@dvv-international.am էլ. հասցեներին (թեմայի դաշտում անհրաժեշտ է նշել

[1] Ընտրության գործընթացում առաջնահերթությունը տրվելու է կազմակերպություններին, սակայն պայմանավորված ստացված հայտերի քանակով և որակով դիտարկվելու են նաև փորձագիտական խմբերի կողմից ներկայացված հայտերը:

«Համագործակցության հայտ»):[2]

Հարցերի առկայության կամ տարակուսելու պարագայում կարող եք մասնակցել հունիսի 16-ին կայանալիք տեղեկատվական հանդիպմանը, որի մանրամասները ներկայացված են ստորև:

Փուլ 2: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից ձևավորված անկախ մասնագիտական հանձնաժողով-ժյուրիի կողմից դիտարկվում են բոլոր դիմումները և գնահատվում ըստ հետևյալ չափանիշների (առավելագույնը 50 միավոր).

Չափանիշ	Առավելագույն միավոր
Դիմող կազմակերպության/փորձագիտական խմբի ընդհանուր փորձառությունը և կոմպետենտությունը տվյալ բնագավառում	10 միավոր
Դասընթացի մշակման և ներդրման մոտեցումը (աշխատանքի կոնցեպտը)՝ այդ թվում առկա ծրագիրը	20 միավոր
Նմանատիպ աշխատանքներ իրականացնելու փորձառությունը (այդ թվում մենթորություն, դոնորների հետ համագործակցություն, այլ)	10 միավոր
Նորարարությունը, ստեղծագործական մոտեցումը և տեխնոլոգիական լուծումները	10 միավոր

Փուլ 3: Ընտրության չափանիշներին առավելապես համապատասխանող ընտրված կազմակերպություն(ներ)ը/փորձագետների խումբը ծանոթանում է ՄԿԿ-ների գործունեությանը, առանձնահատկություններին, իրականացնում է դասընթացի թեմայի վերաբերյալ ՄԿԿ-ների ակնկալիքների և կարիքների գնահատում, որի հիման վրա տեղայնացնում և/կամ վերամշակում է իր կողմից առաջարկվող դասընթացը/մոտեցումը:

Փուլ 4: Ընտրված կազմակերպություն(ներ)ն/փորձագետների խումբն իրականացնում է ՄԿԿ-ների կողմից կցված մասնագետների վերապատրաստում, ուսումնական ողջ փաթեթի փոխանցում՝ ծրագրի շարունակականությունը ապահովելու նպատակով:

Փուլ 5: Ընտրված կազմակերպությունը/փորձագետների խումբը իրականացնում է մենթորություն՝ պիլոտային խմբի հետ ծրագրի իրականացման փուլում:

և/կամ այլ:[3]

Վերը թվարկված գործողությունների իրականացման համար նախատեսվում է ընտրված կազմակերպությանը/փորձագետների խմբին տրամադրել[4] մոտ 3000-3500 եվրոյին համարժեք դրամ՝ կախված իրականացվող աշխատանքի ծավալից:

[2] Պատասխան նամակին սպասել էլ. նամակի տեսքով (խնդրում ենք հետևել նաև Spam/Junk բաժիններին):

[3] Սույն ցանկում ներառված համագործակցության ասպեկտները քննարկվում և հաստատվում են ընդգրկված կողմերի փոխադարձ համաձայնությամբ ընտրության գործընթացի ընթացքում և արդյունքում:

[4] Վերջինիս կդիտարկվի ծառայությունների տրամադրում և կամրագրվի Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի և տվյալ կազմակերպության միջև պայմանագրով, ինչպես նաև եռակողմ համագործակցության հուշագրով (Կազմակերպություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ և ՄԿԿ):

Համագործակցության ձևավորման ժամանակացույց

• Դասընթացի մշակման և ներդրման հայտաթերթիկի ներկայացում կազմակերպությունների կողմից	**Հունիսի 6 – Հունիսի 25**
• Առցանց տեղեկատվական հանդիպում հետաքրքրված կառույցների ներկայացուցիչների հետ	**Հունիսի 16, ժամը 16:00**
• Դասընթացն իրականացնող կառույց(ներ)ի/ փորձագիտական խմբ(եր)ի ընտրություն և համագործակցության քննարկում	**Հունիսի 26- հուլիսի 9**
• Համագործակցության հաստատման հանդիպումներ կազմակերպության և ՄԿԿ-ների միջև և գործընկերության ձևավորում, աշխատանքների մեկնարկ	**Հուլիսի 10- հուլիսի 30**
• Դասընթացի մշակում և ներդրում՝ այդ թվում պիլոտավորում	**Օգոստոսի 1-նոյեմբերի 30**

Վերը նշված փուլերում ներգրավված են լինելու Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի և աջակցվող ՄԿԿ-ների ներկայացուցիչները:

Առցանց տեղեկատվական հանդիպում հետաքրքրված կառույցների ներկայացուցիչների հետ

Մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետի ավարտը՝ հունիսի 16-ին, ժամը 16:00-ին, հետաքրքրված կազմակերպության ներկայացուցիչը/ փորձագետների խումբ և/կամ ներկայացուցիչը կարող են մասնակցել բաց տեղեկատվական հանդիպմանը, որի ընթացքում կներկայացվեն ծրագրի մանրամասները, տեղեկատվություն կտրամադրվի ՄԿԿ-երի, նրանց գործունեության առանձնահատկությունների, թիրախային լսարանի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպիչների կողմից կտրվեն մասնակիցներին հետաքրքրող հարցերի պատասխաններ:
Առցանց տեղեկատվական հանդիպմանը մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել հետևյալ https://forms.gle/Zu6x6mLvXL6SStFB7 ձևաթուղթը, որտեղ նշված կոնտակտային էլ. փոստին կստանաք հանդիպման հղումը (խնդրում ենք հետևել նաև Spam/Junk բաժինները):

Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել +374 93 409 422 հեռախոսահամարով:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և հայաստանյան գրասենյակի մասին

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մասին

Որպես մեծահասակների կրթության առաջատար մասնագիտական կառույց՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն արդեն 50 տարի է, ինչ պարտավորություն է ստանձնել խթանելու շարունակական կրթությունը ավելի քան 40 երկրներում՝ աջակցություն տրամադրելով մեծահասակների կրթություն (18 և բարձր տարիքի անձանց) իրականացնող կառույցների ստեղծմանը և զարգացմանը: Դի- Վի-Վի Ինթերնեյշնալը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության, Եվրոպական միության, ինչպես նաև այլ դոնորների կողմից:

Մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ)մասին

UNESCO-ն (2015թ.) ՄՈՒԿ-ը սահմանում է որպես կրթության ու ուսումնառության բոլոր այն ձևերը, որոնց նպատակն է խթանել մեծահասակների ներգրավվածությունը հասարակական կյանքում և աշխատաշուկայում: Այն պարունակում է ֆորմալ, ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնական գործընթացների ամբողջությունը, որի օգնությամբ հասարակության կողմից մեծահասակ ընկալվող մարդիկ զարգացնում ու հարստացնում են ապրելու և աշխատելու համար անհրաժեշտ կարողություններ՝ ելնելով իրենց համայնքների, կազմակերպությունների, հասարակությունների կամ էլ իրենց սեփական շահերից: Քանի որ շատ հասարակություններում երիտասարդության ու հասունության սահմանները փոփոխական են, «մեծահասակ» եզրը ներառում է այն բոլոր մարդկանց, որոնք ներգրավված են մեծահասակների ուսումնառության ու կրթության մեջ, նույնիսկ եթե դեռ չափահաս չեն:

Եվրոպական միությունը (ԵՄ) մեծահասակների կրթությունը սահմանում է որպես «ընդհանուր և մասնագիտական, ֆորմալ ու ոչ ֆորմալ ուսումնական գործունեության տեսակներ, որոնցում մեծահասակներն ընդգրկվում են առաջնային կրթությունից ու ուսումնառությունից հետո»:

Մեծահասակների կրթության հինգերորդ միջազգային համաժողովում (1997թ.) ՄՈՒԿ-ը սահմանվում է հետևյալ կերպ. «Ֆորմալ կամ ոչ ֆորմալ շարունակական ուսումնական գործընթացների ամբողջություն, որի օգնությամբ հասարակության կողմից մեծահասակ ընկալվող մարդիկ զարգացնում են իրենց ունակությունները, հարստացնում իրենց գիտելիքներն ու բարելավում իրենց տեխնիկական կամ մասնագիտական որակավորումները, կամ էլ նոր ուղղվածություն հաղորդում դրանց՝ համապատասխանեցնելով հասարակության կամ իրենց սեփական կարիքներին»:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի մասին

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 2002թ.-ին՝ դառնալով Հայաստանում մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն իր գործունեությունը ծավալում է եռամյա ծրագրերով՝ 3 մակարդակներում.

- Մակրո մակարդակ՝ ՄԿ ոլորտում քաղաքականության և համակարգային փոփոխություններ,
- Մեզո մակարդակ՝ կազմակերպությունների և մասնագետների կարողությունների զարգացում,
- Միկրո մակարդակ՝ մեծահասակների կրթության իրականացում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից աջակցություն ստացող ՄԿ կենտրոններում:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից աջակցություն ստացող մեծահասկաների կրթության կենտրոնների մասին

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն աջակցում է 4 մեծահասակների կրթության կենտրոնների.

ՄԿԿ	Գտնվելու վայր	Համագործակցություն
«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն	Շիրակի մարզ	2007թ.-ից սկսած
Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն	Սյունիքի մարզ	2014թ.-ից սկսած
Դիլիջանի համայնքային կենտրոն	Տավուշի մարզ	2021թ.-ից սկսած
Մարտունու կանանց համայնքային խորհուրդ	Գեղարքունիքի մարզ	2021թ.-ից սկսած

Այդ աջակցության շրջանակներում վերոնշյալ կենտրոններին տրամադրվում է տարեկան ֆինանսավորում ոչ ֆորմալ կրթական ծրագրեր (մասնագիտական և փափուկ հմտությունների ուսուցման) և նախաձեռնություններ իրականացնելու նպատակով, ինչպես նաև իրականացվում է կենտրոնների աշխատակազմի և դասընթացավարների կարողությունների շարունակական զարգացում՝ դասընթացավարների դասընթացի (ToT), ուսումնական այցերի, մենթորական աջակցության, Մեծահասակների կրթության ցանցում ներառման և մասնակցության միջոցով: